ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«26» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0021-21

Ձեռնարկողը՝ **«ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ՍՊԸ**
Քաղաք Երևան, Դավիթաշեն թաղ.66

Գործունեությունը՝ Աջափնյակ վարչական շրջան, Հալաբյան փ. 75/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0021-21

<<26>> 01 2021թ.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջան, Հալաբյան փ. 75/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Աջափնյակ վարչական շրջան

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքները նախատեսվում են իրականացնել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան փողոց 75/1 հասցեում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 0.7308հա ընդհանուր մակերեսով հողամասի վրա՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման:

Գործունեության նպատակն է՝ կառուցել ժամակակից բազմաբնակարան բնակելի համալիր, որը լինելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ տարածքի շրջակա կառույցներին և շրջակա բնակչության համար չի հանդիսանում վիզուալ տեսադաշտին խոչընդոտ:

Նկարագրական մաս.

Կառուցապատման համար նախատեսված հողամասը գտնվում է Հալաբյան փողոցի և Դավթաշեն-Աշտարակ մայրուղու խաչմերուկում, Հրազդան գետի աջ ափին:

Համաձայն սեփականաշնորհման վկայականի՝ 0.7308հա հողամասում առկա է 279.7մ² մակերեսով ինքնակամ շինություններ: Գործունեության ընթացքում նախատեսվում է 1623մ² մակերեսով շինությունների կառուցում (վերգետնյա կառուցապատման աշխատանքներ) և 3078մ² մակերեսով ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցման աշխատանքներ: Հողամասով անցնում են 0,4կՎտ լարման ստորգետնյա մալուխային գծեր, որոնք ըստ «ՀԷՑ»-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի նախատեսվում է տեղափոխել:

ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Նախատեսվում է նաև բնակելի համալիրի տարածքի բարեկարգում՝ 2761մ² մակերեսով սալվածքների և ճանապարհների իրականացում ու 2924մ² մակերեսով կանաչապատ գոտիների ստեղծման աշխատանքներ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից գործունեության ենթակա տարածքն ունի թեքություն, որի վերին և ստորին բացարձակ նիշերի տարբերությունը 5 մ է:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքի ստորգետնյա ջրերի մակարդակը տեղամասում գտնվում է ցածր հորիզոններում և չեն հայտնաբերվել մինչև 30 մ խորության փորվածքներում:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքները կմեկնարկեն տարածքում առկա 279.7մ² մակերեսով ինքնակամ շինությունների ապամոնտաժման աշխատանքներից: Ապամոնտաժման աշխատանքների տևողությունը, համաձայն ապամոնտաժման աշխատանքների նախագծի, հաշվարկվում է շուրջ վեց ամիս, որոնք կիրականցվեն բուն կառուցապատման աշխատանքներին զուգահեռ: Նշված շինությունները իրենցից ներկայացնում են մեկ երկհարկանի քարե և բետոնե կառույց և կիսավեր կառուցվածքներ: Ապամոնտաժման գործողությունները կիրականացվեն բացառապես կտրող գործիքներով և կբացառվի քանդող հարվածային գործքիների կիրառումը:

Նախատեսված է շինությունը կառուցել «Ա», «Բ» և «Գ» մասնաշենքերից: «Բ» և «Գ» մասնաշենքերի առաջին վերգետնյա հարկերը նախատեսվում են օգտագործել առևտրահասարակական նպատակով, իսկ «Ա» մասնաշենքի առաջին հարկի մեծ մասը և «Բ» ու «Գ» մասնաշենքերի 2-18 հարկերը նախատեսվում են որպես բնակելի հարկեր: Յուրաքանչյուր բնակելի հարկում նախատեսվում է տիպային 17-18 բնակարաններ, իսկ 15-18 հարկերում հարկայնության բարձրացմանը զուգահեռ բնակարանների քանակը նվազում է: Բնակարանների ընդհանուր քանակը կկազմի 255:

Ըստ ներկայացված նախագծի բնակարանների բոլոր բացվածքները դեպի պատշգամբ նախատեսվում են իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Շենքում նախատեսվում է վերելակ: Աստիճանավանդակների դռները կունենան ինքնափակման համակարգ, իսկ ավտոհանգրվանի հարկերը միմյանցից առանձնացված կլինեն ինքնաշխատ դարպասներով:

Բնակելի համալիրի ջրամատակարարումն ու ջրհեռացումը, էլեկտրամատակարարումն ու գազամատակարարումը իրականացվելու են համաձայն «Վեոլիա Ջուր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունների տեխնիկական պայմանների:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարության տևողությունը ծրագրավորվում է 30 ամիս՝ ըստ մշակված շինաշխատանքային կազմակերպման նախագծի:

Շինարարական աշխատանքներին մասնակցելու են 45մարդ:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր, աշտարակային կռունկ, բուլդոզեր, բետոնամուղ պոմպ, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրավորվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Շինարարական աշխատանքների ընթացքում կգոյանա շուրջ 34221մ³ շինաղբ/ավելորդ գրունտ և 260մ³ շինաղբ, որը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով տեղափոխվելու է հողամասից՝ Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր (ամենաուշը երեք օրը մեկ):

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 3440.6մ^3/շին.ժամ: Ջրցանի հաշվարկները կատարված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում:

Հողային աշխատանքների ընթացքում՝ ըստ աշխատանքային նախագծի, գնահատվում են ստորև ներկայացվող ծավալները՝

- հեռացվող գրունտ/հանույթ՝ 42038մ^3 (մեքենայացված) + 382մ^3 (ձեռքով),
- հետլիցք՝ 7919մ^3 (մեքենայացված) + 280մ^3 (ձեռքով),
- տեղափոխվող և թափոնակույտվող հանույթ՝ 34 221մ^3:

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած ավելորդ գրունտը կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայրում: Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է շուրջ 3.5 ամիս:

Նախատեսվող շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

Գործունեության ենթակա տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում շենքի շուրջ կստեղծվեն շուրջ 2289մ^2 ընդհանուր մակերեսով երթևեկելի ասֆալտապատ և սալապատ գոտիներ, ինչպես նաև կիրականացվի 2924մ^2 մակերեսով կանաչ գոտի: Տարածքի «Կանաչ գոտիների բարեկարգման նախագիծ»-ը համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ, որի համաձայն նախատեսվում են արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող ծառատեսակների տնկում: Այսպիսով, կանաչ գոտիներում նախատեսվում է տնկել եղևնի (7 հատ), կաղնիներ (4 հատ), հացենի (9 հատ), ակացիա (6 հատ), ինչպես նաև՝ դեկորատիվ ծառատեսակներ՝ գնդաձև թույա (106 հատ) և ծորենի (54 հատ): Կանաչապատ գիտիներում կիրականացվի նաև բազմամյա խոտաբույսերի ցանք, մասնավորապես, համալիրի տարածքում նախատեսվող բացօթյա սպորտային և խաղահրապարակների մակերևույթը նախատեսվում է խոտածածկ: Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով: Ոռոգման խողովակաշարը կմոնտաժվի 20 սմ խորությամբ, իսկ ոռոգման ջուրը կվերցրվի տարածքով անցնող ոռոգման քաղաքային ջրագծից: Նորաստեղծ կանաչ գոտիներում անհրաժեշտ սևահողը (1169մ^3) կմատակարարվի լիցենզավորված մատակարարներից՝ պահպանելով ՀՀ-ում գործող օրենքները:

Գործունեության ենթակա տարածքում պատմամշակութային հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են՝ մթնոլորտային օդը, հողը և ջրային ռեսուրսները պահպանել աղտոտումից, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում:

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԻԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- շինարական աղբի/ավելորդ գրունտի կանանոնավոր հեռացում և թափոնակույտում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար փակ աղբամաններ, իսկ կենցաղային աղբը կհեռացվի հասարակական աղբաման,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում,
- շինարարական մեքենաների տեղաշարժը սահմանափակ է՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- աղմուկ առաջացնող աշխատանքները կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 14:00-18:00,
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականցվի լիցենզավորված մատակարարից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում, այդ թվում՝ հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ,
- կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, դիմակներով և այլն,
- մեքենաների վառելիքի լիցքավորումը ու քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում
- համալիրում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ հաստատված նախագծի:

Ամբողջ շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 36597.794 հազ. դրամ (առանց հարկերի):

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի բազմաբնակարան բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Աջափնյակ վարչական շրջանի թաղապետարանը, ինչպես նաև այլ գերատեսչություններ: Հայտը լրամշակվել է նաև ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ա. Սարգսյան փողոցի շենք 5 հասցեում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ГОРОДА ЕРЕВАНА
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER OF THE REPUBLIC OF ARMENIA
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոնն ու նորմերը:
3. Կանաչապատումն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաները պարտադիր լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին:
7. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների համար սահմանել երթեր ու ժամանակացույց:
8. Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:
9. Կառուցապատման աշխատանքների ընթացքում ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
10. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ժամանակացույցով՝ ըստ աշխատանքային օրերի և ժամերի:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Հալաբյան փ. 75/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան